ԽՄԲԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ «ՄԻԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Դեկտեմբերի 15-ին տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մանգասարյանի նախաձեռնությամբ Ֆինանսներ 3-րդ կուրսի ուսանողները «Միկրոտնտեսագիտություն» դասընթացի շրջանակներում խմբային հետազոտական աշխատանքներ են ներկայացրել կազմակերպությունների ֆինանսական տվյալների վերաբերյալ:

Հանդիպմանը ներկա էին ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ներկայացվել են ընտրված կազմակերպությունների («Ֆիդես» հիպոթեքային ընկերություն, «Արցախի ներդրումային հիմնադրամ», «Արցախբանկ» ՓԲԸ) ֆինանսական տվյալները:

«Հուսով ենք՝ այսպիսի ճանաչողական միջոցառումներ պարբերաբար կկազմակերպվեն, քանի որ դրանք մի կողմից տեղեկության ստացման աղբյուր են, մյուս կողմից նպաստում են թիմում՝ որպես ամբողջության մաս գործելու ունակությունների զարգացմանը»,- նշել է Քրիստինե Կարապետյանը, ով հանդես էր եկել «Ֆիդես» հիպոթեքային ընկերության մասին ելույթով:

ԱՐՊՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ



Հայ-Ռուսական համալսարանում ՌԴ Լուսավորության նախարարության աջակցությամբ կայացել է «Բառի արվեստը: Ռուսական մշակույթի կարևոր ասպեկտները» թեմայով համաժողովը և «Լեզու և ժամանակ: Մասնագիտական զարգացման ուղիներ» խորագրով վերապատրաստման դասընթացը, որին մասնակցություն են ունեցել ներկայացուցիչներ 23 երկրներից՝ Հայաստանից, Ռուսաստանից, Բելառուսից, Բուլղարիայից, Մեծ Բրիտանիայից, Հունաստանից, Վրաստանից, Իսրայելից, Հնդկաստանից, Իտալիայից, Ղազախստանից, Ղրղզստանից, Չինաստանից, Մոնղոլիայից, Մոլդովայից, Լեհաստանից, Սերբիայից, Տաջիկստանից, Ուզբեկստանից, Հարավային Օսեթիայից,Ուկրաինայից, Չեխիայից, Էստոնիայից: Միջոցառումներին մասնակցություն են ունեցել նաև ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դասախոսներ և ֆակուլտետի ուսանողներ: Առկա և հեռավար եղանակով կայացած միջոցառումների ծրագրում ընդգրկված են եղել կլոր սեղան-քննարկումներ, դասախոսություններ, վարպետաց դասեր:

Բոլոր մասնակիցները մասնակցության համար ստացել են հավաստագրեր: Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Ինգա Հակոբյանը մասնագիտական բարձր վարպետության և ինովացիոն տեխնոլոգիաների զարգացման գործում ունեցած ավանդի համար, իսկ «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի Մարիաննա Աղաբեկյանը՝ մասնագիտական հմտության համար ՌԴ լուսավորության նախարարության կողմից պարգևատրվել են պատվոգրերով:

«Շնորհակալություն եմ հայտնում միջոցառման նախաձեռնողներին, ՌԴ Լուսավորության նախարարությանը՝ միջոցառմանը մասնակցություն ընձեռելու համար: Հպարտություն է, որ այդպիսի մեծ ընդգրկում ունեցող միջոցառմանը հնչում է Արցախի պետական համալսարանի և ԱրՊՀ ուսանողի անունը»,-նշել է Ինգա Հակոբյանը՝ բարձր գնահատելով միջոցառման կարևորությունն ու արդյունավետությունը ԱրՊՀ համար:

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 09(237)
դեկտեմբեր - 2021

ԱՐՊՀ ՌԵԿՏՈՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՌՈՒԲԵՆ ԹՈՓՉՅԱՆԻՆ՝ ՀՀ ՈԱԱԿ ՏՆՕՐԵՆ ՎԵՐԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

Հարգարժա՛ն պարոն Թոփչյան

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ՝ ՀՀ ՈԱԱԿ տնօրենի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ:

Ձեր մասնագիտական կարողությունների և մարդկային որակների շնորհիվ Դուք կարողանում եք պատվով իրականացնել Ձեր առաքելությունը բարդ ու պատասխանատու բնագավառում:

Մեծ է Ձեր ավանդը Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության մասնագիտական ուսումնական հաստատություններում օրենսդրությանը համապատասխան կրթության որակի ապահովման մշակույթ ստեղծելու, մասնագիտական կրթական համակարգում որակի շարունակական բարելավում ապահովելու գործում:

Արցախի պետական համալսարանը, ինստիտուցիոնալ հավատարմագրման ողջ ընթացքում՝ ինքնավերլուծություն, փորձագիտական քննություն և որոշման կայացում, մշտապես գտնվելով ՈԱԱԿ հետ փոխգործակցային դաշտում, նկատելի առաջընթաց է գրանցել կրթության և ինստիտուցիոնալ կարողությունների որակի բարելավման և զարգացման ուղղությամբ այս տարիների ընթացքում՝ շնորհիվ ՈԱԱԿ ցուցաբերած արդյունավետ ու մասնագիտական բարձր աշխատանքի: Օգտվելով պատեհ առիթից՝ շնորհակալություն եմ հայտնում ՀՀ ՈԱԱԿ ողջ կազմին՝ Ձեր գլխավորությամբ՝ որդեգրած արժեքներին հավատարիմ գործելու համար:

Հանրության վստահությունը, նորարարության խթանումը, հավասար հնարավորությունների ու հաշվետվողականության ապահովումը և փոխգործակցությունը Ձեր որդեգրած այն գերակա արժեքներն են, որոնց շնորհիվ ՈԱԱԿ-ն կարողանում է արդյունավետություն ապահովել բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ապահովման և շարունակական բարելավման գործում:

Արցախի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, աշխատակիցների, ուսանողության և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ, մաղթում անսպառ եռանդ, առողջություն և բեղուն գործունեություն՝ ի նպաստ ՀՀ և ԱՀ կրթական համակարգի զարգացման:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ՝ ԴՊՐՈՑՈՒՄ

ԱՀ Սահմանադրության օրվա նախօրեին ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավունքի ամբիոնը, ամբիոնի դասախոս, ի.գ.թ., դոցենտ Ռիտա Առուստամյանի նախաձեռնությամբ, Ստեփանակերտի հ. 3 հիմնական դպրոցում կազմակերպել է միջոցառում՝ նվիրված Սահմանադրության օրվան: Միջոցառումը, որն արդեն ավանդույթ է դարձել իրավունքի ամբիոնի համար, այս անգամ անց է կացվել «Իրավագիտություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողների մասնակցությամբ:

«Միջոցառման նպատակն էր արժևորել Սահմանադրությունը, ցույց տալ աշակերտներին դրա կարևորությունը, մեկնաբանել հիմնական դրույթները և խթանել դպրոցականների իրավագիտակցության բարձրացումը»,- ասել է իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ. Տաթևիկ Գևորգյանը:

Հանդիպման ընթացքում ուսանողները ներկայացրել են օրենքի անհրաժեշտությունն ու կարևորությունը, մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, պետական իշխանության երեք թևերը և դրան առնչվող այլ հարցեր:

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆԸ

Դեկտեմբերի 10-ին ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Նունե Սարումյանի նախաձեռնությամբ ԱրՊՀ-ում կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ նվիրված 1991 թ. դեկտեմբերի 10-ի Արցախի Հանրապետության անկախության հանրաքվեին և 2006 թ. դեկտեմբերի 10-ին ԱՀ Սահմանադրության ընդունմանը: Կլոր սեղան-քննարկմանը հրավիրված էին պատմական այդ կարևորագույն իրադարձությունների ականատես-մասնակիցներ պ.գ.դ, պրոֆեսոր Ստեփան Դադայանը, իրավագետ, պետական գործիչ Արարատ Դանիելյանը, ֆակուլտետի դասախոսներ, ուսանողներ:

Ողջունելով ներկաներին՝ պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ Նունե Սարումյանը շնորհավորել է ներկաներին օրվա առթիվ՝ խոսելով օրվա խորհրդի, հանրաքվեի անցկացման պատմաքաղաքական նախադրյալների, անհրաժեշտության և Սահմանադրության մասին:

«30 տարի առաջ այս օրը Ստեփանակերտում հրետակոծությունների տակ ու ծանր պայմաններում մեր ժողովուրդը «Այո» ասաց անկախությանը և ապա օրինական ճանապարհով վերահաստատեց ազատ, անկախ ու ինքնիշխան պետություն ունենալու մեր անբեկանելի երթը: Այսօր ստեղծված քաղաքական իրավիճակում կարևոր ու արդիական է խոսել, վերարժևորել մեր պատմական կարևորագույն իրադարձությունները, որը երիտասարդ սերնդի, մասնավորապես ուսանողության համար դասի նշանակություն ունի»,-ասել է նա՝ հավելելով, որ երիտասարդ սերունդը պետք է իմանա մեր անցած պատմական ուղին, դասեր քաղի պատմությունից, առաջնորդվելով այդ դասերով՝ պահպանի այն արժեքները, որոնք ժառանգել է ավագ սերնդից:

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԵՆ 2-ՐԴ ԸՆԹԱՑԻԿ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

Արցախի պետական համալսարանում դեկտեմբերի 13-ից 24-ը կազմակերպվել են քննաշրջանի 2-րդ փուլի ընթացիկ ստուգումները: Համավարակային իրավիճակով պայմանավորված՝ քննասենյակ մտնող մեծ խմբերը կիսվել են, որպեսզի պահպանվեն հակահամաճարակային կանոնները:

«Աշխատանքները կազմակերպել ենք այնպես, որպեսզի քննական դահլիճում պահպանվեն համավարակի տարածումը կանխարգելող սահմանված բոլոր կանոնները, այդ թվում ուշադրություն ենք դարձրել հատկապես այն փաստին, որ 40-ից ավելի ուսանող չլինի դահլիճում, որպեսզի հնարավոր լինի պահպանել սոցիալական հեռավորությունը»,-ասել է ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի պետ Գոհար Գասպարյանը՝ հավելելով, որ պարբերաբար, ըստ սահմանված կանոնների, ախտահանվել են դահլիճը և առկա իրերը:

ՈՒԳՎ պատասխանատուի խոսքով՝ քննաշրջանն անցել է բնականոն հունով, որևէ էական խնդիր չի արձանագրվել, արձանագրված խնդիրները տեխնիկական բնույթի են եղել, որոնք տեղում լուծվել են համակարգչային սպասարկման բաժնի աշխատակիցների կողմից:

Ընթացիկ փուլի ստուգումները կազմակերպվում են համակարգչային եղանակով՝ թեստային մեթոդով: Յուրաքանչյուր տարի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների ուղղորդմամբ ու վերահսկմամբ վերանայվում են թեստերը, թարմացվում, նախորդ տարիներին նկատված թերացումները շտկվում ու կատարելագործում:

ԱՐՊՀ-Ն ՄԱՍՆԱԿՑԵԼ Է «ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳԱՎԱԹ 2021» ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԹԻՄԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻՆ

Հայ-ռուսական համալսարանի նախաձեռնությամբ կայացավ ‹‹Անկախության գավաթ 2021›› ծրագրավորման թիմային օլիմպիադան, որին մասնակցել է նաև Արցախի պետական համալսարանը:



Օլիմպիադայի մասնակցության ցուցանիշը այս տարի ամենաբարձրն է գրանցվել՝ նախորդ բոլոր տարիների համեմատ, գրանցվել է 44 թիմ՝ ավելի քան 130 մասնակից, ծրագրավորման ուղղությամբ մասնագիտություն ունեցող ԱՀ և ՀՀ բուհերից:

ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Վազգեն Առստամյանի խոսքով՝ օլիմպիադային ԱրՊՀ-ից մասնակցել է երեք թիմ, յուրաքանչյուր թիմում երեք ուսանող՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» և «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությամբ սովորող: Թիմի մարզիչն էր կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի դասախոս Արթուր Մնացականյանը: Վ. Առստամյանի խոսքով՝ ԱրՊՀ ուսանողները ցուցաբերել են ակտիվ մասնակցություն և բարձր ցուցանիշներ՝ նախորդ տարվա համեմատ:

Միջոցառման նպատակն էր երիտասարդների մոտ զարգացնել ծրագրավորման հմտությունները, ներգրավել նրանց ծրագրավորման ոլորտում:

Ինչպես վերջին տարիներին, այս տարի նույնպես խնդիրների փաթեթը պարունակում էր ալգորիթմական և տեխնիկական խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ էին պատկերների ճանաչման, HTTP protocol-ի և RegEx-ի գիտելիքներ:

ԱՌՑԱՆՑ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՈՐԲՈՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ՀԵՏ

Արցախի պետական համալսարանի ուսանողական խորհրդի և իրավունքի ամբիոնի համատեղ նախաձեռնությամբ ԱրՊՀ ուսանողների հետ դեկտեմբերի 15-ին առցանց հանդիպում է ունեցել Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Արամ Մարտիրոսեանը:

Սորբոնի համալսարանի Արևելյան քրիստոնեության իրավունքների և հաստատությունների ամբիոնի իրավունքի պատմության պրոֆեսոր, EPHE-ի կրոնական գիտությունների բաժնի ուսումնական տնօրեն Արամ Մարտիրոսեանը առցանց հանդիպման ընթացքում հանդես է եկել դասախոսությամբ՝ «Հայ կանոնական իրավունքի քաղաքական-կրոնական հիմնախնդիրները. պատմությունից մինչև մեր օրերը» թեմայով: Դասախոսությանը մասնակցել են ինչպես ԱրՊՀ ուսանողներ ու դասախոսներ, այնպես էլ հետաքրքրված մասնագետներ Սփյուռքից և ՀՀ-ից:

Պրոֆեսոր Արամ Մարտիրոսեանի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցությունը դարձնելու շարունակական:

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ «ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Դեկտեմբերի 21-ին ԱրՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Նարինե Ավանեսյանի նախաձեռնությամբ «Անձնակազմի կառավարում» դասընթացի շրջանակում «Կառավարում» 3-րդ կուրսի ուսանողների մասնակցությամբ անց է կացվել պայմանական կազմակերպությունների անձնակազմի կառավարման մոտեցումների ներկայացում: Ուսանողները ներկայացրել են կազմակերպությունների անձնակազմի կառուցվածքը, կադրային քաղաքականությունը, մոտիվացիան, պայմանական կոնֆլիկտի առաջացման պատճառները, լուծման ուղիները, ղեկավարի անձնական հատկանիշները, ղեկավարման ոճը:

Ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանի խոսքով՝ նման միջոցառումները հնարավորություն են տալիս ուսանողների մոտ զարգացնել ինչպես տնտեսական-վերլուծական, այնպես էլ ստեղծագործական միտքը:

«Նրանք տվյալ դասընթացի շրջանակում հնարավորություն են ունենում տարբեր կազմակերպությունների օրինակներով ներկայացնել անձնակազմի կառավարման մոտեցումները»,-ասել է նա:

Ֆինանսահաշվային ամբիոնի դասախոս Արևիկ Ալեքսանյանի կարծիքով նման քննարկումները հնարավորություն են տալիս ուսանողներին դասընթացի շրջանակում ստացած գիտելիքները, հմտությունները և կարողությունները կիրառել գործնականում:

ՏԵՂԻ է ՈՒՆԵՑԵԼ «ԱՐՑԱԽԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Դեկտեմբերի 10-ին ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի նախաձեռնությամբ տեղի է ունեցել ամբիոնի դասախոս, բ.գ.թ., դոցենտ Զինաիդա Բալայանի «Արցախը 19-րդ դարի հայ գրականության մեջ» գրքի շնորհանդեսը: Գիրքը գիտական աշխատություն է, որը հեղինակի տասնամյակների տքնաջան աշխատանքի արդյունքն է:

«Արցախը 19-րդ դարի հայ գրականության մեջ» ուսումնասիրությունը Արցախի թեման ներկայացնող եզակի և համապարփակ գրականագիտական անդրադարձ է հայ գրականության համապատկերին, որի վերլուծական առանցքներում ընդգրկված և համակողմանիորեն քննված, վերարժևորված են Արցախին վերաբերող ազգային բարձր որակ հատկանշող կոթողային չխամրող արժեքներ:

Շնորհանդեսին ներկա էին ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, համալսարանի դասախոսներ, ուսանողներ, հյուրեր:

Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհավորել է ներկաներին՝ ԱՀ Սահմանադրության օրվա առթիվ և խորհրդանշական համարել հենց այդ օրը Արցախի հայկականությունը փաստող գիտական ուսումնասիրություն ընթերցողի դատին հանձնելը:

«Կան գրականագետ գիտնականներ, ովքեր միայն գիտությամբ են զբաղվում, և գրականագետներ, ովքեր նաև հայ գրականությունն են հանրայնացնում: Զ. Բալայանն իր աշխատանքով այս երկու առաքելությունն էլ իրականացնում է գրական խմբակների, միջոցառումների, աշխատությունների միջոցով»,-ասել է ռեկտորը:

Բ.գ.դ., պրոֆեսոր Սոկրատ Խանյանը, ով նաև գրքի գրախոսականի հեղինակն է, բարձր գնահատելով հեղինակի աշխատանքը, նշել է, որ գիրքը պատասխան է Արցախի պատմությունը խեղաթյուրող կեղծարարներին:

«Զ. Բալայանի ուսումնասիրությունը հանրագիտարանային լայն ընդգրկումներ ունի: Նա առաջինն է գրականագիտական հայեցակարգով քննարկում ու արժեքավորում այն հեղինակների երկերը, որոնցում արծարծվել է արցախյան թեման 19-րդ դարի հայ գրականության համապատկերում՝ այս տեսանկյունից հանդիսանալով առաջադրված հիմնախնդիրն առաջինը բացահայտող կոթողային գրականագիտական արժեքի հեղինակ»,-նշել է Ս. Խանյանը:

Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ. Նոնա Դավթյանը, շնորհավորելով հեղինակին, հանգամանորեն ներկայացրել է գրքի կառուցվածքը, հիմնական դրույթները՝ նշելով. «Զ. Բալայանի ուսումնասիրության տեսադաշտում Արցախն է՝ գրական աղերսներով, պատմական անցքերով ու իրադարձություններով: Շնորհակալություն ենք հայտնում հեղինակին՝ տարիների իր տքնանքը ընթերցողի սեղանին դնելու համար»:

Գիրքը արժևորող ելույթներով հանդես են եկել նաև դասախոսներ, ուսանողներ:

Զ. Բալայանն իր ելույթում շնորհակալություն է հայտնել ներկաներին, գրքի տպագրության աշխատանքներին սատարած հովանավորներին, խմբագիր-գրախոսներին: Նրա խոսքով՝ ուսումնասիրությունը հասցեագրված է մասնավորապես 18-րդ և ամբողջությամբ 19-րդ դարի Արցախի գեղարվեստով, գրականությամբ, պատմությամբ, մշակույթով, գրականության և պատմության փիլիսոփայությամբ, արցախագիտությամբ զբաղվողներին, գրականագետներին, հայ և օտար բանասեր-պատմաբաններին, ուսանողությանը, ընթերցող լայն շրջանակներին, ինտելեկտուալ հանրությանը:

«ՂԱՐԱԲԱՂ. ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Դեկտեմբերի 24-ին Արցախի պետական համալսարանում տեղի է ունեցել երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԱրՊՀ պատվավոր դոկտոր Գրիգորի Գաբրիելյանցի (Ղարաբաղցի) «Ղարաբաղ. պատմական դեպքերի ժամանակագրություն» ռուսալեզու գրքի շնորհանդեսը:

Շնորհանդեսը մեկնարկել է հարգանքի տուրքով՝ ի հիշատակ պատերազմում հանուն հայրենիքի անմահացած նահատակների:

Գիրքը, որը նվիրված է Արցախի պատմությանը, հիմնված է պատմական իրադարձությունների և փաստերի վրա, որոնց համար աղբյուր են հանդիսացել անտիկ հեղինակների, հայ և օտար պատմիչների, հեղինակավոր հանրագիտարանների և ժամանակակից գիտնականների աշխատությունները:

Շնորհանդեսին ներկա էին ԱՀ նախագահի աշխատակազմի, հանրապետության գերատեսչությունների գործող և նախկին պատասխանատուներ, համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից, ուսանողներից ներկայացուցիչներ, հյուրեր:

Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհավորել է Գրիգորի Գաբրիելյանցին՝ գրքի հրատարակման առթիվ՝ ընդգծելով նրա ավանդը պետականաշինության, ինչպես նաև ԱրՊՀ զարգացման գործում:

«Այս աշխատությունը յուրահատուկ կառուցվածք ունի և արժեքավոր է ոչ միայն պատմությամբ, այլ նաև հարակից մի շարք գիտություններով զբաղվողների համար, և այն կարող է լինել լուրջ ուղեցույց Արցախով հետաքրքրվողների ու Արցախի պատմությունն ուսումնասիրողների համար: Մեծ է Գ. Գաբրիելյանցի ավանդը: Նա ոչ միայն պատմաբան, երկրաբան ու հասարակական գործիչ է, այլ նաև խորը գիտելիքներ ունի տարբեր բնագավառներից»,-ասել է ԱրՊՀ ռեկտորը և տեղեկացրել, որ ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանից հանձնարարական է ստացել սեղմ ժամկետներում գիրքը ռուսերենից թարգմանել հայերեն և տպագրել, որի ուղղությամբ էլ արդեն իրականացվելիք աշխատանքները նախանշվել են:

Գիրքը արժևորող ելույթներով հանդես են եկել ԱրՊՀ գիտության և միջազգային հարաբերությունների գծով պրոռեկտոր, պ.գ.դ., պրոֆեսոր Վալերի Ավանեսյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Վահրամ Բալայանը, պատմաբան Լեռնիկ Հովհաննիսյանը, բ.գ.դ., պրոֆեսոր, գրող Սոկրատ Խանյանը:

«Գիրքը հայ ժողովրդի դիմակայելու և պայքարելու յուրահատուկ գաղափարախոսությունն է: Թյուրքական աշխարհի և Ադրբեջանի կողմից անընդհատ փորձ է արվում մեր պատմությունը կեղծելու և խեղաթյուրելու: Գ. Գաբրիելյանցի աշխատությունը հատկապես այս համատեքստում արժեքավոր է»,-նշել է պատմաբան Վահրամ Բալայանը՝ ընդգծելով Գ. Գաբրիելյանցի ազգանվեր գործունեությունն ու իր ժողովրդին ծառայելու նրա գերակա սկզբունքը, որ մշտապես ծառայեցրել է ի շահ Արցախի:

Գրքի հեղինակ Գրիգորի Գաբրիելյանցը (Ղարաբաղցի), շնորհակալություն հայտնելով ներկաներին ու ելույթ ունեցողներին, նշել է, որ հաճելի է, երբ կատարած աշխատանքը գնահատվում է:

«Գիրքը, ասես, քո սեփական երեխան լինի, որին գուրգուրելով պահում, մեծացնում ես, հետո բաց թողնում աշխարհ: Այս գիրքը հիմնված է ստույգ փաստերի վրա և նպատակն էր հղում անելով պատմությանն ու երկրագիտությանը՝ արժևորել անցյալը այսօրվա համատեքստում, ասել է թե՝ գլխավոր մեթոդը արդիականությունն է, պատմական փաստերի արդիականացումը»,-ասել է Գ. Գաբրիելյանցը:

ՏԵՂԻ է ՈՒՆԵՑԵԼ ԱրՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ՆԻՍՏԸ

Դեկտեմբերի 21-ին տեղի է ունեցել ԱրՊՀ գիտական խորհրդի տարեվերջյան նիստը, որի ընթացքում քննարկվել և հաստատվել են ուսումնական գործընթացին վերաբերող հարցեր և կանոնակարգեր:

Օրակարգի առաջին հարցով ուսումնական գործընթացի ընթացքի մասին տեղեկատվությամբ հանդես են եկել ֆակուլտետների դեկանները և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը: Ըստ տեղեկատվության՝ ուսումնական պարապմունքները և երկրորդ ընթացիկ ստուգումներն անցնում են բնականոն հունով, ըստ նախապես սահմանված ժամանակացույցի, արդյունավետ կառավարման շնորհիվ հաջողվել է հաղթահարել համավարակային իրավիճակով պայմանավորված խնդիրները և դասընթացները հասցնել ավարտին՝ համաձայն ուսումնական պլանի:

Օրակարգային հաջորդ հարցը վերաբերում էր 2021-2022 ուսումնական տարվա փորձուսուցման ժամանակացույցում փոփոխություն կատարելուն: Հարցը ներկայացրել է պրոռեկտոր Գ. Սահակյանը: Ռեկտորատը քննարկել և գիտխորհրդի հաստատմանն է ներկայացրել առաջին կիսամյակում ուսումնական պլանով մանկավարժական փորձուսուցման ժամակածավալում փոփոխություն կատարելու մասին հարցը և այն դարձնել երեք շաբաթ: Գիտխորհուրդը, քննարկելով հարցը, այն հաստատել է՝ հաշվի առնելով նաև համավարակի հետ կապված հանրակրթական դպրոցներում դասագործընթացի դադարեցման փաստը, որի պատճառով հնարավոր չի եղել տվյալ ժամանակահատվածում կազմակերպել մանկավարժական փորձուսուցումը:

ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթի մասին հարցը գիտխորհրդին է ներկայացրել գիտքարտուղար Գայանե Մարգարյանը՝ տեղեկատվություն ներկայացնելով մրցույթի ընթացքի, փաստաթղթերի հանձնման և կանոնակարգով սահմանված այլ հարցերի մասին:

Նիստի օրակարգի մյուս հարցը կանոնակարգային փոփոխությունների և նոր կարգերի հաստատման մասին էր, որը ներկայացրել է պրոռեկտոր Գ. Սահակյանը: Պրոռեկտորը նիստի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացրել երկու փաստաթուղթ, որոնցից մեկը՝ ձևաթերթ, մյուսը գնահատման թերթիկ էր: Ըստ զեկուցողի՝ փաստաթղթերից մեկը միտված է ուսանողի կուրսային, ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանության և գնահատման գործընթացն ավելի օբյեկտիվ ու արդյունավետ դարձնելուն, իսկ մյուսով կկանոնակարգվի դասախոսների դասալսման և գնահատման գործընթացը: Նշյալ փաստաթղթերը մշակվել են գիտխորհրդին կից գործող ուսումնամեթոդական հանձնաժողովի կողմից, ինչն ուղղված է ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելուն:

Այլ հարցերում գիտխորհուրդը քննարկել է տոն օրերով պայմանավորված աշխատաժամանակի, աշխատանքների կազմակերպման, ջեռուցման տնտեսման հետ կապված և հարակից այլ հարցեր: